# Հարգելի՛ պրն. Դարբինյան,

ՀԱՊԿ ինստիտուտի Հայաստանի ազգային ներկայացուցչության անձնակազմի և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ, Ձեր պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին

## Գիտելիքի և դպրության օրվա առթիվ

Մարդկային քաղաքակրթության զարգացման, ազգերի ու ժողովուրդների ինքնահաստատման և հարատևման հիմքում միշտ էլ եղել և մնում է աշխարհաճանաչողության արդյունքում ձևավորված գիտելիքի ու փորձի փոխանցումը սերունդներին: 21-րդ դարում գիտելիքն է հասարակությունների զարգացման շարժիչ ուժն ու առաջխաղացումն ապահովող գործոնը: Մեր պետությանն այսօր կրթված ու զարգացած հասարակություն է անհրաժեշտ՝ երկրի կայուն առաջընթացն ապահովելու համար:

Հետևաբար այսօր համալսարանները ոչ միայն պետք է առանձնեն որակյալ մասնագետների պատրաստման, գիտելիքների փոխանցման ու վերարտադրության առաքելությունը, այլև պետք է դառնան հասարակության առանցքն ու առաջնորդ ուժը:

Այսօր ևս Ձեր կրթօջախը շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը և հանրապետության տնտեսության կարիքներին ու հասարակության կրթական պահանջմունքներին համահունչ իրականացնել կրթահետազոտական ծրագրեր և մատուցել դրանց առնչվող ծառայություններ: Անգնահատելի է Ձեր համալսարանի ավանդը Հայաստանի կրթության համակարգի զարգացման, երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության, գիտական ոլորտի զարգացման գործում: Այսօր իրավամբ կարող ենք փաստել, որ Հայ-ռուսական համալսարանն իր իրականացրած գիտակրթական բարձրարժեք գործունեությամբ Հայաստանի համար դարձել է կրթա մշակութային և ազգապահպան կենտրոն:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ **Գիտելիքի և դպրության օրվա առթիվ՝** մաղթելով, որ նման արդյունավետությամբ շարունակեք իրականացնել կրթական համակարգի կառավարման և շարունակաբար կատարելագործելու պատասխանատու և վեհ առաքելությունը, քանզի մենք պարտավոր ենք շարժվել աշխարհին համաքայլ, կրթել և դաստիարակել գիտելիքներով հարուստ, առողջ ու արժանապատիվ սերունդ:

**ՀԱՊԿ ինստիտուտի Հայաստանի**
**Ազգային Ներկայացուցչության տնօրեն**
**տեխնիկական գիտ. թեկնածու, դոցենտ՝** **Ն. Թորոսյան**

**«01» սեպտեմբեր 2019թ.**
**Երևան**